<<ՀԱՍՏԱՏՎԱԾ Է>>

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի 01.06.2017թ. թիվ 5 նիստում:
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի նախագահ,
ոստիկանության գեներալ-լեյտենանտ
Հովհ.Վարյան
<<_____>>_____2017թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Նախաբան

1) ՀՀ ոստիկանության կրթահամալիրը բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական, ինչպես նաեւ ոստիկանական նախնական, միջին մասնագիտական և լրացուցիչ կրթական ծրագրեր իրականացնող միակ բուհն է Հայաստանում:
2) Կրթահամալիրի առաքելությունն է.

ա. իրավաբանական, ոստիկանական կրթությամբ մասնագետների, պահնորդ, թիկնապահ, ինչպես նաև գիտամանկավարժական կադրերի պատրաստումը, իրավական մտքի և մասնագիտական հմտությունների ձևավորումը,

բ. ոստիկանության կրտսեր, միջին, ավագ և գլխավոր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների վերապատրաստումը (մասնագիտական որակավորում),

գ. ոստիկանության գործունեության հետ կապված հիմնախնդիրների գիտական մշակումը, իրավագիտության բնագավառում հետազոտությունների իրականացումը,

դ. կրթահամալիրի ներուժի զարգացման և կրթական(գիտական) գործունեության արդյունավետության ու որակի բարձրացման շնորհիվ՝ շրջանավարտների մրցունակության բարձրացումը,

ե. կրթական և մասնագիտական հմտությունների ձևավորման համար ապագա գործատուների ներգրավումը կրթահամալիրի կրթական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում,
է. նորագույն տեխնալոգիաների օգտագործման միջոցով շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործման ուղղված տեղեկատվության փոխանցումը,
ը. պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտելիքների և մանակվարժական հմտությունների շարունակական կատարելագործման ապահովումը որպես առաջնային և կենտրոնական բաղադրիչի ապահովումը, ինչպես նաև ՀՀ կրթության համակարգի գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեությանը աջակցման միջոց՝ Կրթահամալիրի հետազոտական հնարավորությունների զարգացումը:

3) Մասնագիտական իրավաբանական և ոստիկանական որակյալ կրթությամբ մասնագետների պատրաստման խնդրի լուծման համար ապահովել մասնագիտական պատրաստման զարգացող համակարգ և ուսումնական միջավայր, որը կստեղծի համապատասխան նախադրյալներ համակողմանի զարգացած, առաջանցիկ գիտելիք կրող մասնագետների պատրսատմանը՝ առօրյա մասնագիտական գործունեության ընթացքում արդյունավետ կիրառելու, ինչպես նաև գիտելիքն ապագա սերունդներին փոխանցելու նպատակով:

4) Կրթահամալիրը նաև հետազոտական գործունեություն իրականացնող հաստատություն է, որտեղ կարևորվում է որակի ապահովումը ուսումնական, գիտական և ինստիտուցիոնալ բոլոր մակարդակներում:
5) Կրթահամալիրը որակի ապահովման գործընթացներում և ընթացակարգերում առաջնորդվում է.
ա. ՀՀ Սահմադրությամբ,
բ. «Կրթության մասին» ՀՀ օրենքով,
գ. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով,
դ. «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով,
ե. «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով,
զ. ՀՀ կառավարության որոշումներով,
է. ՀՀ ոստիկանության պետի հրամաններով,
ը. ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամաններով,
թ. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կանոնադրությամբ և ուսումնական գորընթացը կանոնակարգող նորմատիվ ակտերով,
ժ. ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավական ակտերով,
ի. Կրթահամալիրի զարգացման ռազմավարության սկզբունքներով,
լ. Որակի ապահովման եվրոպական և ազգային չափանիշներով և չափորոշիչներով,
խ. Նախորդ տարիներին կատարած աշխատանքների վերլուծության արդյունքներով:

6) Որակի քաղաքականությունը Կրթահամալիրի կրթության որակի բնագավառի նպատակների, խնդիրների, ինչպես նաև ռազմավարական սկզբունքների և արժեքների հոչակագիրն է: Կրթության որակի ապահովումը Կրթահամալիրի ծրագրային առաջնահերթություններից է, որը մասնագիտական իրավաբանական, ոստիկանական կրթությամբ մասնագետների պատրաստման նպատակով անհրաժեշտ գիտելիքների ստեղծման, փոխանցման և տարածման հիմնասյուներից է:

2. Կրթահամալիրում որակի ներքին ապահովման քաղաքականության նպատակը

Կրթահամալիրում որակի ներքին ապահովման քաղաքականությունը միտված է սահմանելու կրթության որակի ապահովման սկզբունքները, մոտեցումները և ուղղությունները:

3. Կրթահամալիրում որակի ներքին ապահովման քաղաքականության խնդիրները

1) Կրթահամալիրում որակի ներքին ապահովման քաղաքականության խնդիրներն են.
ա. որակի ներքին ապահովման ընթացակարգերի մշակման և ներդրման նպատակով Կրթահամալիրի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը,
բ. միջազգային չափանիշներին համապատասխան որակի ներբուհական ապահովման գործընթացի մշակման նպատակով անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը,
գ. որակի մշակույթի ստեղծման նախադրյալների ապահովումը,

դ. կրթության բնագավառում առկա ձեռքբերումների, ազգային առանձնահատկությունների հիման վրա՝ իրականացնել պետության, հասարակության և անհատի տվյալ ժամանակահատվածին համահունչ որակյալ կրթություն՝ մասնագիտական կրթության բոլոր մակարդակներում, այդ թվում՝ հետբուհական և լրացուցիչ կրթության,
ե. կրթության որակի ապահովման ճկուն ընթացակարգերի և մեխանիզմների միջոցով ապահովել Կրթահամալիրի գրավչությունն ու ինտեգրումը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին,
զ. նպաստել և խթանել հետազոտության արդյունքների ներդրումը ուսուցման և ուսումնական գործընթացներում, ապահովել վերջիններում սովորողների ներգրավվածությունը,
է. նպաստել և խթանել որակի շարունակական բարելավման մշակույթի ներդրումը,
ը. կրթահամալիրի առանձնահատկություններով պայմանավորված փորձի տարածման նպատակով նմանատիպ կրթական ծրագրեր իրականացնող համապատասխան բուհերի հետ համագործակցությունը,
թ. կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի համագործակցության չափանիշների մշակումը,
ժ. առաջավոր փորձի տարածման նպատակով նմանատիպ կրթական ծրագրեր իրականացնող համապատասխան բուհերի հետ պրոֆեսորադասախոսական անձնակազմի և սովորողների փոխանակման շրջանակներում համագործակցության չափանիշների մշակումը:

4. Կրթահամալիրում որակի ներքին ապահովման քաղաքականությունը և դրանց իրագործումը

1) Կրթահամալիրն որակի ապահովման իր գործընթացներում առաջնորդվում է հետևյալ ելակետային դրույթներով.

ա. ***Նպատակայնությունը:***
Կրթահամալիրում բոլոր գործընթացները և աշխատանքներն իրականացվում են՝ հիմք ընդունելով Կրթահամալիրի առաքելությունից, կանոնադրությունից և ռազմավարական ուղենիշներից բխող նպատակները:

բ. Գործընթացի փաստերով հիմնավորվածությունը:
Որակի ապահովման գործընթացների իրականացումը և բարելավումը պետք է հիմնված լինեն տեղեկատվական նոր տեխնոլոգիաներով գործառական տվյալների հավաքման և վերլուծման միջոցով ստացած իրական փաստերի վրա:
գ. ***Շարունակական փոխակերպմանն արձագանքումը:***
մանկավարժության, մասնագիտական կրթության բնագավառում շարունակական փոխակերպումներին արձագանքելու և դրանք կառավարելու հիման վրա պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի մասնագիտական որակների և կարողությունների աճի խթանումը:
դ. Ուսումնական և կառավարման գործընթացիների շարունակական բարելավումը:

Կրթահամալիրում որակի ապահովման համակարգի արդյունավետությունը դա ապահովող ուսումնական և կառավարչական ընթացակարգերի և գործընթացների, ուսանողներին տրամադրվող ծառայությունների թերացումների վեր հանումը, դրանց շտկումը և բարելավումն է:

ե. Հետազոտության ինտեգրումը որպես դասավանդման և ուսուցման գործընթացի խթանիչ:

Հետադարձ կապի շնորհիվ Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների համագործակցությունը պետք է ապահովի դասավանդման և ուսուցման գործընթացում հետազոտության ինտեգրումը, ինչպես նաև խթանի հետազոտական ուսուցումը:

զ. Որակի ապահովման հստակ ձևակերպված խնդիրներն ու դրանց հասնելու ուղիները:

Որակի ապահովման խնդիրները, ինչպես նաև դրանց հասնելու ուղիները, ընթացակարգերը և միջոցները պետք է ձևակերպված լինեն հստակ, առարկայական և ողջամիտ ժամկետներում իրագործելի:

է. Թիմային մոտեցում:

Կրթահամալիրում որակի ապահովման համակարգը, ընթացակարգերը և մեխանիզմները պետք է հասանելի լինեն, որի ուսումնասիրման և հետադարձ կապի ապահովմանը միջոցով կստեղծի Կրթահամալիրում որակի ապահովման նկատմամբ գործընկերային և թիմային մոտեցման մթնոլորտ:

2) Կրթահամալիրի ռազմավարությամբ և առաքելությամբ սահմանված ուղենիշները, այդ թվում՝ որակի ապահովման գործընթացի վերոնշյալ ելակետային դրույթների իրագործման համար պետք է.

ա. իրականացնել մշտադիտարկում, որի արդյունքերը օգտագործվելու են կրթության, հետազոտության և սովորողներին տրամադրվող ծառայությունների բարելավման համար,

բ. մշտադիտարկման արդյունքների վերլուծության հիման պետք է մատնանշել Կրթահամալիրի տարբեր ոլորտների թերացումները, դրանում առկա լավագույն փորձը, որի հիման վրա կկազմվի տարեկան բարելավման ծրագիր,

գ. կրթահամալիրում որակի ապահովման մշակույթի ձևավորման համար ստեղծել բարենպաստ միջավայր բուհի վարչակազմի, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և սովորողների մասնագիտական զարգացման, դասավանդման և ուսուցման նորագույն հմտությունների և գիտելիքների ձեռքբերման համար,

դ. ստեղծել կառավարման և հաշվետվողականության թափանցիկ համակարգ, որն ապահովելու է սովորողների, դասախոսների և վարչակազմի մասնագիտական տիրույթում որակի ապահովման գործընթացների մասնակցությունը, ինչպես նաև որակի ապահովման ընթացակարգերի և գործընթացների բարելավման նպատակով՝ վերջիներիս կողմից կարծիքների ու առաջարկությունների տրամադրումը,

ե. որակի ապահովման գործընթացների անարգելք իրագործման, դրանց բարելավման համար Կրթահամալիրի կառուցվածքային ստորաբաժանումների և ռեսուրսների օգտագործումը:

5. Որակի ներքին ապահովման պատասխանատուները

1) Որակի ներքին ապահովումը գտնվում է Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական և վարչական համակազմի յուրաքանչյուր անդամի պատասխանատվության շրջաններում և հանդիսանում է նրանց առօրյա գործունեության անբաժանելի մասը:

2) Որակի ներքին ապահովման կառավարման համակարգը.

ա. Կրթահամալիրի պետը: **Վ**երահսկում է որակի ներքին ապահովման քաղաքականության իրագործումը:

բ. Կրթահամալիրի գիտական խորհրդին կից՝ ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողովը: Պատասխանատու է որակի ապահովման քաղաքականության և հայեցակարգերի բարելավմանն ուղղված առաջարկների ուսումնասիրության, դրանք ապահովող փաստաթղթերի, կրթական ծրագրերի վերանայման և ներդրման քննարկման ու գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար:

գ. Կրթության որակի ապահովման բաժանմունք: Պատասխանատու է որակի ապահովման քաղաքականության և հայեցակարգի իրագործման, մշտադիտարկման համար: Մշտադիտարկման արդյունքի հիման վրա ներկայացնում է առաջարկություններ որակի ապահովման գործընթացների բարելավման համար: Իրականացնում է Կրթահամալիրի կառուցվածքային ստորաբաժանումներից տվյալների, ինքնագնահատման հաշվետվությունների հավաքում և վերլուծություն, որը փոխանցում է ***Կրթահամալիրի գիտական խորհրդին կից՝ ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողով***ին: Բաժանմունքը համագործակցում է որակի ապահովման հանձնաժողովների և համապատասխան ստորաբաժանումների որակի ապահովման պատասխանատուների հետ:

դ. Կրթահամալիրի կառուցվածքային ստորաբաժանումների որակի ապահովման հանձնաժողովները: **Պ**ատասխանատու են ուսուցման որակի և գործող ծրագրերի վերահսկման և մշտադիտարկման, նոր ուսումնական ծրագրերի քննարկման, Կրթահամալիրի որդեգրած մակարդակով ընդունվող որոշումների հետևողական իրագործման հսկողության համար: Որակի ապահովման հանձնաժողովները, ըստ անհրաժեշտության, քննարկում և առաջարկություններ են ներկայացնում համապատասխան ոլորտների անհրաժեշտ ընթացակարգերի և կանոնակարգերի մշակման ու բարելավման համար:

ե. Որակի ապահովման պատասխանատու: **Ի**րականացնում է համապատասխան ոլորտում որակի ապահովման և վերահսկման գործառույթներ, առաջարկություններ է ներկայացնում կազմակերպման ուսումնական ծրագրերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ, համագործակցում է Կրթահամալիրի այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ՝ տվյալների հավաքման և փոխանցման նպատակով:

զ. Նպատակային ենթախմբեր: Անհրաժեշտության դեպքում ստեղծվում են ***Կրթահամալիրի գիտական խորհրդին կից՝ ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողով***ում և ուսումնասիրում և հանձնաժողովի են ներկայացնում

առաջարկություններ համապատասխան ոլորտի անհրաժեշտ ընթացակարգերի, կանոնակարգերի մշակման, վերանայման և կատարելագործման վերաբերյալ:

6. Մշտադիտարկումը որպես Կրթահամալիրում որակի ներքին ապահովման իրականացման գործիք

1) Կրթահամալիրում որակի ներքին ապահովման քաղաքականության, ընթացակարգերի և գործընթացների իրագործման վերահսկողության համար իրականացվում է մշտադիտարկում, որն իրականացնում է կրթության որակի ապահովման բաժանմունքը: համապատասխան համակարգի, գործընթացների և մեխանիզմների միջոցով մշտադիտարկումը կապահովի ներքին և արտաքին հետադարձ կապը:
2) Կրթական գործընթացների կազմակերպումը, ինչպես նաև ինստիտուցիոնալ մակարդակներում կառավարման գործընթացները մշտադիտարկվում են ուսումնական տարվա ողջ ընթացքում՝ համապատասխան գործիքակազմի միջոցով: Մշտադիտարկման և վերահսկման նպատակով տեղեկատվության հավաքման և մշակման համար կրթության որակի ապահովման բաժանմունքը համագործակցում է Կրթահամալիրի կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների հետ: Արդյունքներն ամփոփվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին և մշակվում համապատասխան առաջարկություններ թերությունները շտկելու և լավագույն փորձը տարածելու նպատակով: